Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14-3

ք. Երևան 06/ 05 /2021թ.

« ՀՀ արդարադատության նախարարություն »-ը ի դեմս Գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյան ի, որը գործում է « ՀՀ արդարադատության նախարարություն »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Արսեն Զանյան ի, որը գործում է « «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա

փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3782419.99 AMD(երեք միլիոն յոթ հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր տասնիննըդրամինսունիննըլումա ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում: 730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

-

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

—

8 31[3]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային

գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները

չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը* [5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման

նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական տրոհման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին` տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները` փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերի միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների

միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

—

13[8]

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ արդարադատության նախարարություն**

**Վ.Սարգսյան 3/8**

**Կենտրոնական Գանձապետարան**

**900011018547**

**02506264**

GALSTYAN SUREN 1111911555

Подписано цифровой подписью: GALSTYAN SUREN 1111911555 DN: c=AM, sn=········, givenName=········, serialNumber=a01c20c6c42, cn=GALSTYAN SUREN 1111911555 Дата: 2021.05.06 10:09:46 +04'00'

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ**

**ՀՀ, ք.Երևան, Քրիստափորի 2/2**

**Ինեկոբանկ ՓԲԸ**

**2050422209671001**

**02584897**

ZANYAN ARSEN 2703680309

Подписано цифровой подписью: ZANYAN ARSEN 2703680309 DN: c=AM, sn=······, givenName=······, serialNumber=1c31d3d76ead, cn=ZANYAN ARSEN 2703680309 Дата: 2021.05.05 11:58:01 +04'00'

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

[11]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:

[3]31 8 Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից

[4]9 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[5]10 Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

[6]11 Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[7]12 Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

[8]13 Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված դրավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Հավելված N 1
06/ 05 /2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, արտադրողի անվանումը* | տեխնիկական բնութագիրը |
| 15 | 30141200/2 | հաշվասարք, գրասենյակային | Citizen, Citizen Sistems | Հաշվասարք գրասենյակային, էլեկտրոնային, մարտկոցը լուսային ճառագայթով ինքնալիցքավորվող ֆունկցիայով (աշխատող), էկրանը՝ 12 նիշանի, հետադարձ ֆունկցիայի և <00> կոճակներով: |
| 16 | 30192100/2 | ռետին հասարակ | Maped, MAPED HELIX HK Trading CO.LTD | ռետին հասարակ , գույնը՝ սպիտակ, փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով, չափսերը՝ 22x8x60մմ: |
| 17 | 30192111/2 | թանաքի բարձիկներ | Flamingo, MUREX LTD | թանաքի բարձիկներ՝ պլաստմասե՝ բացվող կափարիչով, բարձիկի չափսերը՝ 70x110մմ, բարձիկը՝ կապույտ գույնի: |
| 18 | 30192114/ | թանաք, | Flamingo, | թանաք, կնիքի բարձիկի համար ՝ սրվակներով, թանաքը՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 2 | կնիքի բարձիկի համար | MUREX LTD | կապույտ գույնի, սրվակում՝ 30մլ: |
| 23 | 30192210/2 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | Homeson, YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO. LTD | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, չափսը՝ 48մմx100մ տնտեսական, մեծ, թափանցիկ: |
| 24 | 30192220/2 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | Hatber, Hatber-M | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, չափսը՝ 19մմx36մ գրասենյակային, փոքր, թափանցիկ: |
| 35 | 30197321/2 | կարիչ, մինչ— 20 թերթի համար | Kangaro, Kangaro Group | Կարիչ գրասենյակային՝ ստեպլեր, նախատեսված թղթերը միմյանց մետաղական ասեղով ամրացնելու համար, N 10 չափսի մետաղական ասեղներով կարող, 20 հատ թուղթ ( խտությունը՝ 80 գ/մ2) առանց ասեղի աղավաղումների միաժամանակ կարելու հնարավորությամբ: |
| 36 | 30197322/2 | կարիչ, 20-50 թերթի համար | Kangaro, Kangaro Group | Կարիչ գրասենյակային՝ ստեպլեր, նախատեսված թղթերը միմյանց մետաղական ասեղով ամրացնելու համար, N 24/6-1M չափսի մետաղական ասեղներով կարող, 30 հատ թուղթ ( խտությունը՝ 80 գ/մ2) առանց ասեղի աղավաղումների միաժամանակ կարելու հնարավորությամբ: |
| 38 | 30197332/ | դակիչ | Kangaro, | Դակիչ՝ ծակոտիչ գրասենյակային, 30 հատ թուղթ (խտությունը՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 2 | միջին | Kangaro Group | 80 գ/մ2) առանց աղավաղումների միաժամանակ դակող: |
| 39 | 30197622/4 | թուղթ, A4 ֆորմատի | Ballet Premier, International Paper | A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, սպիտակությունը՝ 161 (CIE համակարգով, առանց շեղումների), չափսերը՝ 210X297մմ., տուփերով՝ յուրաքանչյուրում 500 հատ, մեկ տուփի քաշը՝ 2495 գ: |
| 46 | 30199400/4 | սոսնձապատված կամ կպչուն թուղթ | XingLi, YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO. LTD | Թուղթ ինքնասոսնձվող եզրով, սլաքաձև՝ նախատեսված որպես էջանիշ, գունավոր՝ առնվազն 5 տարբեր գույների, տրցակներով՝ 25-ական շերտ յուրաքանչյուր գույնից: Չափսը՝ 12x45մմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով: |
| 47 | 30199410/2 | ինքնակպչուն թուղթ, A4 | Sorex, SOREX LABELS, LTD | Ինքնակպչուն թուղթ A4 չափսի, տուփերով: Յուրաքանչյուր թուղթը ուղղանկյունաձև հավասարաչափ բաժանված 65 մասի, սպիտակ գույնի, փաթեթավորված ստվարաթղթե տուփերով՝ 100-ական: Յուրաքանչյուր 100 հատանոց փաթեթավորված տուփը դիտարկվում է որպես 1 հատ: |
| 48 | 30234300/2 | դատարկ սկավառակ, առանց տուփի, CD | Bingo, CMC | դատարկ սկավառակ, առանց տուփի, CD՝ յուրաքանչյուրը՝ պոլիէթիլենային պաշտպանիչ ֆայլով: |
| 53 | 39263400/2 | ամրակ, միջին | TQ, YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO. LTD | Ամրակ մետաղյա, միջին, փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Տուփում 100 հատ՝ 33մմ չափսի: |
| 54 | 39263420/2 | ամրակ, մեծ | TQ, YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO. LTD | Ամրակ մետաղյա, մեծ, փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Տուփում 100 հատ՝ 50մմ չափսի: |
| 55 | 39263510/2 | սեղմակ, փոքր | Diamond, YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO. LTD | Սեղմակ փոքր չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, տուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 19մմ լայնությամբ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 56 | 39263520/2 | սեղմակ, միջին | Diamond, YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO. LTD | Սեղմակ միջին չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, տուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 40մմ լայնությամբ: |
| 57 | 39263530/2 | սեղմակ, մեծ | Diamond, YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO. LTD | Սեղմակ մեծ չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, տուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 50մմ լայնությամբ: |

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարություն | «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ |
| Հասցե՝ Վ.Սարգսյան 3/8 | Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Քրիստափորի 2/2 |
| Կենտրոնական Գանձապետարան | Ինեկոբանկ ՓԲԸ |
| 900011018547 | 2050422209671001 |
| 02506264 | 02584897 |
| Գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյան | Արսեն Զանյան |
| ________ | ZANYAN ARSEN 2703680309 Подписано цифровой подписью: ZANYAN ARSEN 2703680309 DN: c=AM, sn=•••••••, givenName=•••••, serialNumber=1c31d3d76ead, cn=ZANYAN ARSEN 2703680309 Дата: 2021.05.05 11:58:34 +04'00' |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

GALSTYAN SUREN 1111911555

Подписано цифровой подписью: GALSTYAN SUREN 1111911555
DN: c=AM, sn=•••••••,
givenName=•••••,
serialNumber=a01c20c6c42,
cn=GALSTYAN SUREN 1111911555
Дата: 2021.05.06 10:10:09 +04'00'

Հավելված N 2
06/05/2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

## ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 15 | հատ | 2650.00 | 5300.00 | 2 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 2 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 16 | հատ | 60.00 | 1200.00 | 20 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 20 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | հատ | 340.00 | 6800.00 | 20 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 20 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 18 | հատ | 180.00 | 7200.00 | 40 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 40 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 23 | հատ | 349.99 | 2799.99 | 8 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 8 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 24 | հատ | 80.00 | 1200.00 | 15 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 15 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 35 | հատ | 450.00 | 9000.00 | 20 | ՀՀ ք.Երևան, | 20 | Պայմանագրի ուժի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վ.Սարգսյան 3/8 | | մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| | 36 | հատ | 930.00 | 46500.00 | 50 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 50 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| | 38 | հատ | 1800.00 | 18000.00 | 10 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 10 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| | 39 | կիլոգրամ | 600.00 | 3600000.00 | 6000 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցում գտնվող՝ պատվիրատուի նշված վայրը /պահեստ/ | 6000 | Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 1000հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2021թ., 2) 5000հատ՝ Պայմանագրի ուժի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | մեջ մտնելու օրվանից մինչև 10.09.2021թ.,բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| | 46 | հատ | 140.00 | 16800.00 | 120 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 120 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| | 47 | հատ | 3500.00 | 21000.00 | 6 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 6 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| | 48 | հատ | 65.00 | 19500.00 | 300 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 300 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| | 53 | տուփ | 90.00 | 9000.00 | 100 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 100 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 54 | տուփ | 180.00 | 9000.00 | 50 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 50 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 55 | հատ | 9.00 | 1080.00 | 120 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 120 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 56 | հատ | 28.00 | 3360.00 | 120 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 120 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |
| 57 | հատ | 39.00 | 4680.00 | 120 | ՀՀ ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | 120 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 օրացուցային օրվա |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2021թթ. |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| | |
|---|---|
| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| **ՀՀ արդարադատության նախարարություն** | **«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ** |
| **Հասցե՝ Վ.Սարգսյան 3/8** | **Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Քրիստափորի 2/2** |
| **Կենտրոնական Գանձապետարան** | **Ինեկոբանկ ՓԲԸ** |
| **900011018547** | **2050422209671001** |
| **02506264** | **02584897** |
| **Գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյան** | **Արսեն Զանյան** |
| ZANYAN ARSEN 2703680309 | Подписано цифровой подписью: ZANYAN ARSEN 2703680309 DN: c=AM, sn=······ givenName=·····, serialNumber=1c31d3d76eed, cn=ZANYAN ARSEN 2703680309 Дата: 2021.05.05 11:58:57 +04'00' |
| **/ստորագրություն/** | **/ստորագրություն/** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

GALSTYAN SUREN 1111911555

Подписано цифровой подписью: GALSTYAN SUREN 1111911555
DN: c=AM, sn=········, givenName=······, serialNumber=a01c20c6c42, cn=GALSTYAN SUREN 1111911555
Дата: 2021.05.06 10:10:27 +04'00'

Հավելված N 3
06, 05 /2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 15 | 30141200/2 | հաշվասարք, գրասենյակային | | | | | 5300.00 | 5300.00 | 5300.00 | 5300.00 | 5300.00 | 5300.00 | 5300.00 | 5300.00 | 5300.00 |
| 16 | 30192100/2 | ռետին հասարակ | | | | | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 |
| 17 | 30192111/2 | թանաքի բարձիկներ | | | | | 6800.00 | 6800.00 | 6800.00 | 6800.00 | 6800.00 | 6800.00 | 6800.00 | 6800.00 | 6800.00 |
| 18 | 30192114/2 | թանաք, կնիքի | | | | | 7200.00 | 7200.00 | 7200.00 | 7200.00 | 7200.00 | 7200.00 | 7200.00 | 7200.00 | 7200.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բարձիկի համար | | | | | | | | | | | | | |
| 23 | 30192210/2 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | | | | | 2799.99 | 2799.99 | 2799.99 | 2799.99 | 2799.99 | 2799.99 | 2799.99 | 2799.99 | 2799.99 |
| 24 | 30192220/2 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | | | | | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 | 1200.00 |
| 35 | 30197321/2 | կարիչ, մինչ— 20 թերթի համար | | | | | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 |
| 36 | 30197322/2 | կարիչ, 20-50 թերթի համար | | | | | 46500.00 | 46500.00 | 46500.00 | 46500.00 | 46500.00 | 46500.00 | 46500.00 | 46500.00 | 46500.00 |
| 38 | 30197332/2 | դակիչ միջին | | | | | 18000.00 | 18000.00 | 18000.00 | 18000.00 | 18000.00 | 18000.00 | 18000.00 | 18000.00 | 18000.00 |
| 39 | 30197622/4 | թուղթ, A4 ֆորմատի | | | | | | | 720000.00 | 720000.00 | 720000.00 | 3600000.00 | 3600000.00 | 3600000.00 | 3600000.00 |
| 46 | 30199400/4 | սոսնձապատված կամ կպչուն թուղթ | | | | | 16800.00 | 16800.00 | 16800.00 | 16800.00 | 16800.00 | 16800.00 | 16800.00 | 16800.00 | 16800.00 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 47 | 30199410/2 | ինքնակպչուն թուղթ, A4 | | | | | 21000.00 | 21000.00 | 21000.00 | 21000.00 | 21000.00 | 21000.00 | 21000.00 | 21000.00 | 21000.00 |
| 48 | 30234300/2 | դատարկ սկավառակ, առանց տուփի, CD | | | | | 19500.00 | 19500.00 | 19500.00 | 19500.00 | 19500.00 | 19500.00 | 19500.00 | 19500.00 | 19500.00 |
| 53 | 39263400/2 | ամրակ, միջին | | | | | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 |
| 54 | 39263420/2 | ամրակ, մեծ | | | | | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 | 9000.00 |
| 55 | 39263510/2 | սեղմակ, փոքր | | | | | 1080.00 | 1080.00 | 1080.00 | 1080.00 | 1080.00 | 1080.00 | 1080.00 | 1080.00 | 1080.00 |
| 56 | 39263520/2 | սեղմակ, միջին | | | | | 3360.00 | 3360.00 | 3360.00 | 3360.00 | 3360.00 | 3360.00 | 3360.00 | 3360.00 | 3360.00 |
| 57 | 39263530/2 | սեղմակ, մեծ | | | | | 4680.00 | 4680.00 | 4680.00 | 4680.00 | 4680.00 | 4680.00 | 4680.00 | 4680.00 | 4680.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարություն | «ԱՌԵԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ |
| Հասցե՝ Վ.Սարգսյան 3/8 | Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Քրիստափորի 2/2 |
| Կենտրոնական Գանձապետարան | Ինեկոբանկ ՓԲԸ |
| 900011018547 | 2050422209671001 |
| 02506264 | 02584897 |
| Գլխավոր քարտուղար Սուրեն Գալստյան | Արսեն Զանյան |

GALSTYAN SUREN 1111911555

Подписано цифровой подписью: GALSTYAN SUREN 1111911555
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=a01c20c6c42, cn=GALSTYAN SUREN 1111911555
Дата: 2021.05.06 10:10:41 +04'00'

ZANYAN ARSEN 2703680309

Подписано цифровой подписью: ZANYAN ARSEN 2703680309
DN: c=AM, sn=•••••, givenName=•••••, serialNumber=1c31d3d76ead, cn=ZANYAN ARSEN 2703680309
Дата: 2021.05.05 11:59:21 +04'00'

| /ստորագրություն/<br>Կ.Տ | /ստորագրություն/<br>Կ.Տ |
| --- | --- |

Հավելված N 4
____/___________/2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

____________________

____________________

գտնվելու վայրը ____________
հհ ____________
հվհհ ____________

Պատվիրատու

____________________

____________________

գտնվելու վայրը ____________
հհ ____________
հվհհ ____________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20__թ.

Պայմանագրի համարը՝ ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14-3

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «______________» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրումը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 15 | հաշվասարք, գրասենյակային | Հաշվասարք գրասենյակային, էլեկտրոն | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պյին, մարտկոցը լուսային ճառագայթով ինքնալիցքավորվող ֆունկցիայով (աշխատող), էկրանը՝ 12 նիշանի, հետադարձ ֆունկցիայի և <00> կոճակներով:() | | | | | | |
| 16 | ռետին հասարակ | ռետին հասարակ, գույնը՝ սպիտակ, փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով, չափսերը՝ 22x8x60մմ:() | | | | | | |
| 17 | թանաքի բարձիկներ | թանաքի բարձիկներ՝ պլաստմասե՝ բացվող կափարիչով, բարձիկի չափսերը՝ 70x110մմ, բարձիկը՝ կապույտ գույնի:() | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | թանաք, կնիքի բարձիկի համար | թանաք, կնիքի բարձիկի համար ՝ սրվակներով, թանաքը՝ կապույտ գույնի, սրվակում՝ 30մլ:() | | | | | | |
| 23 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, չափսը՝ 48մմx100մ տնտեսական, մեծ, թափանցիկ:() | | | | | | |
| 24 | պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, չափսը՝ 19մմx36մ գրասենյակային, փոքր, թափանցիկ:() | | | | | | |
| 35 | կարիչ, մինչ— 20 թերթի համար | Կարիչ գրասենյակային՝ ստեպլեր, նախատեսված թղթերը միմյանց մետաղական ասեղով ամրացնելու | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | համար, N 10 չափսի մետաղակ ան ասեղն երով կարող, 20 հատ թուղթ ( խ տությունը ` 80 գ/մ2) առանց ասեղի աղ ավաղումն երի միաժ ամանակ կարելու հ նարավոր ությամբ:() | | | | | | | |
| 36 | կարիչ, 20-50 թերթի համար | կարիչ գր ասենյակ ային` ստեպլեր, նախատե սված թղթերը միմյանց մ ետաղակ ան ասեղով ա մրացնելու համար, N 24/6-1M չափսի մե տաղակա ն ասեղնե րով կարող, 30 հատ թուղթ ( խ տությունը ` 80 գ/մ2) առանց ասեղի աղ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ...պավաղումների միաժամանակ կարելու հնարավորությամբ:() | | | | | | |
| 38 | դակիչ միջին | Դակիչ՝ ծակոտիչ գրասենյակային, 30 հատ թուղթ (խտությունը՝ 80 գ/մ2) առանց ապավաղումների միաժամանակ դակող:() | | | | | | |
| 39 | թուղթ, A4 ֆորմատի | A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թերթեր չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, սպիտակությունը՝ 161 (CIE համակարգով, առանց շեղումների), չափսերը՝ 210X297մ | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ...կ., տուփերով՝ յուրաքանչյուրում 500 հատ, մեկ տուփի քաշը՝ 2495 գ:() | | | | | | | |
| 46 | սոսնձապատված կամ կպչուն թուղթ | Թուղթ ինքնասոսնձվող եզրով, սլաքաձև՝ նախատեսված որպես էջանիշ, գունավոր՝ առնվազն 5 տարբեր գույների, տրցակներով՝ 25-ական շերտ յուրաքանչյուր գույնից: Չափսը՝ 12x45մմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով:() | | | | | | | |
| 47 | ինքնակպչուն թուղթ, A4 | Ինքնակպչուն թուղթ A4 չափսի, տուփերով: Յուրաքանչյուր թուղթը ուղղանկյունաձև հավ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | պասարաչափ բաժանված 65 մասի, պիտակ գույնի, փաթեթավորված ստավարաթղթե տուփերով` 100-ական: Յուրաքանչյուր 100 հատանոց փաթեթավորված տուփը դիտարկվում է որպես 1 հատ:() | | | | | | |
| 48 | դատարկ սկավառակ, առանց տուփի, CD | դատարկ սկավառակ, առանց տուփի, CD յուրաքանչյուրը` պոլիէթիլենային պաշտպանիչ ֆայլով:() | | | | | | |
| 53 | ամրակ, միջին | Ամրակ մետաղյա, միջին, փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Տուփում 100 հատ` 33մմ չափսի:() | | | | | | |
| 54 | ամրակ, | Ամրակ | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մեծ | մետաղյա, մեծ, փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Տուփում 100 հատ՝ 50մմ չափսի:() | | | | | | |
| 55 | սեղմակ, փոքր | Սեղմակ փոքր չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, տուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 19մմ լայնությամբ:() | | | | | | |
| 56 | սեղմակ, միջին | Սեղմակ միջին չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, տուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 40մմ լայնությամբ:() | | | | | | |
| 57 | սեղմակ, մեծ | Սեղմակ մեծ չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 50մմ լայնությամբ:() | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ապրանքը հանձնեց**

______________________

**ստորագրություն**

______________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

**Ապրանքը ընդունեց**

______________________

**ստորագրություն**

______________________

**ազգանուն, անուն**

**Կ.Տ.**

Հավելված N 4.1
____/____________/2021թ. կնքված
ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ արդարադատության նախարարություն -ի (այսուհետ՝ Գնորդ) և «ԱՌԵՎ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ.__________________________ -ին կնքված N ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-21/14-3 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ____________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| հաշվասարք, գրասենյակային | հատ | |
| ռետին հասարակ | հատ | |
| թանաքի բարձիկներ | հատ | |
| թանաք, կնիքի բարձիկի համար | հատ | |
| պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | հատ | |
| պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | հատ | |
| կարիչ, մինչ— 20 թերթի համար | հատ | |
| կարիչ, 20-50 թերթի համար | հատ | |
| դակիչ միջին | հատ | |
| թուղթ, A4 ֆորմատի | կիլոգրամ | |
| սոսնձապատված կամ կպչուն թուղթ | հատ | |
| ինքնակպչուն թուղթ, A4 | հատ | |
| դատարկ սկավառակ, առանց տուփի, CD | հատ | |
| ամրակ, միջին | տուփ | |
| ամրակ, մեծ | տուփ | |
| սեղմակ, փոքր | հատ | |
| սեղմակ, միջին | հատ | |

| | | |
|---|---|---|
| սեղմակ, մեծ | հատ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

**ազգանուն, անուն**

**Ստորագրություն**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

**ազգանուն, անուն**

**Ստորագրություն**